

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35-րդ ՏԱՐԻ

1886 ՅՈՒՆԻՍ 7

ԹԻԻ 3825

ՈՂՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 7 ՅՈՒՆԻՍ :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

ԶԻՆԱՅԻՔ Ի ՔԱՐԻՁ

Բարից օտարականաց քաղաքն է, — կ'ըսէ Ֆէլաթի աշխատակիցներէն մին—, ուր ամեն ազգէ եւ ամեն կրօնքէ մարդիկ խառնուած են միմեանց : Զինաստան միայն երկար ա. միսներէ ի վեր կը պակսէր անդ, եւ այդ պակաս, ոյր պատճառն էր պատերազմը, յոյժ ցաւալի էր Բարիզի գեղազարդ ութեան տեսակէտով : Զինացիք, իրենց երկրէն դուրս, չեն հաներ ազգային հագուստն : Կարծես վերջին կապն է այս որով կը կապուին իրենց հայրենեաց : Եւ, եւրոպական հանդերձեղինաց միօրինակութեան մէջ, այդ խայտաճամուկ կերպաներն յոյժ բնատրիւ ու զուարթ կ'երեւին :

Այսօր, այդ պակասը լրացած է : Պուլ-վարներուն վրայ վերստին տեսնուեցան երկնակապոյտ պճնադեղ պատմութեաններն, որոց վրայ օձակերպիկ կը առտանին իրենց մազերու երկայն հիւսիկներն, ժապաւէններով զարդարուն : Ողջոյն, երկնային որդիք : Սիրելի է մեզ ձեր ներկայութիւնն մեր մէջ, իբր խաղաղութիւն բարերաստիկ հաւատարմը մը, իբր վստահ երաշխաւորութիւն մը թէ արիւնհանգիւթեանց թուականն առ յաւէտ փակուած է :

Խաղաղութեան այդ սուրհանդակներն են « ուսումնասիրութեանց պատուիրակու-թեան » երիտասարդ անդամներն որք իբր

ամիս մը առաջ Բարիզ հասան : Երսուն եւ մէկ հօգի են, որոց երիտասարդագոյնն տա-սըն եւ ութ տարեկան է եւ ամենէն տա-րիքօտը քսան եւ հինգ, եւ կը ճանրորդեն ընդ պաշտպանութեամբ Զէս - Գա - Եէնի, չինացի բարձրաստիճան պաշտօնատար մը, եւ Ուէյ - Հանի, նշանաւոր երկրաչափ չի-նական նաւատորմին : Այս վերջինս ար-դէն մասնակցած է նախորդ չորս պատ-ուիրակութեանց, եւ Զէնք - Քի - Թոնկ զօ-րավարին պէս հնամի եւ ճշմարիտ Բա-րիզցի մ'է :

Փոքրիկ խումբն իւր նախորդաց նման հաստատուած է Մասիյօն օթեւանը, վիէօ Գոյումպիէ փողոց : Գառգիէ Լադէնի (ուսա-նողաց թաղ) ճիշդ մէջտեղն հաստատուել-նին ցոյց կուտայ պատուիրակութեան կըր-թական հանգամանքը : Ուսանելու համար եկած, այդ երիտասարդք աղբիւրներուն կը մօտենան եւ կը միտուն խաղաղ ու անդորր տեղերն որք յարմար են ուսումնա-սիրութեան : Մնաց որ, իրենց տան պէս են այդ օթեւանին մէջ, որուն տէրն, որ երկար փորձառութեամբ լաւ գիտէ անոնց ճաշակները, սովորութիւններն եւ առ տնին պէտքերը, մեծ փափկութեամբ ամեն ջանք ի գործ կը դնէ որպէս զի իւր յարկին ներ-քեւ դռներն քիչ մը հայրենի մթնոլորտ եւ հայրենեաց քաղցր յիշատակներ :

Ուէյ - Հանի հետ ունեցած վաղնջուց եւ մտերմական յարաբերութիւններէս օգուտ քաղելով այցելութիւն մը տուի նմա, — կը շարունակէ Ֆէլաթի աշխատակիցը : Պատ-ուիրակութիւնը նախաճաշի վրայ դտայ, ըստ ֆրանսականին, սա տարբերութեամբ որ փոխանակ գինւոյ՝ տաք կաթ կը խմէին : Այսու հանգերձ Զինացիք չեն արհամարհեր

լաւ շիշ մը , այլ մանաւանդ նախամեծար կը համարին շամբանիտն : Քանի մը շիշ պարպեցինք արդէն ի պահպանումն բարեկամական յարաբերութեանց ընդմէջ Երկնային - կայսրութեան եւ Պրանսայի :

Աղանդերին , կեռասի ահագին կայտ մը բերուեցաւ սեղանին վրայ : Չինացիք չափազանց կը սիրեն այդ պտուղն , որուն մէջ կը գտնեն նրբին համ մը : Հաւանական է որ , իրենց դիւցաբանութեան մէջ , կեռասով մ'է որ օձը փորձեց նախակինն , եւ կեռասներու կոշտի մը համար է սր Եսաւ ծախեց իւր անդրանկութեան իրաւունքը :

Ուէյ - Հան հաճեցաւ տեղեկութիւններ տալ ինձ պատուիրակութեան նպատակին վրայ :

— Այս երեսուն եւ մէկ երիտասարդք , ըսաւ , սպայ են թէ՛ ցամաքային եւ թէ՛ ծովային բանակին մէջ : Եւրոպա զրկուած են կատարելագործելու համար իրենց արհեստը : Տասն եւ չորսը — նաւազ — Լոնտոն եւ Կրինիչ պիտի երթան : Անգլիոյ մէջ ապրելու սահմանեալ լինելով , անդլիարէն կը խօսին այնքան դիւրութեամբ որքան միւս տասն եւ եօթն — զինուորներն — որք Պրանսա պիտի բնակին , կը խօսին ձեր լեզուն : Սոքա , ըստ իրենց յարմարութեան , պիտի հետեւին զինուորական զանազան վարժարանաց ընթացքին եւ իրենց ուսումն աւարտելէ յետոյ պիտի վերադառնան Չինաստան , որ անոնցմէ կը պահանջէ քանի տարուան ծառայութիւն , ի փոխարէն այս բարձրագոյն կրթութեան ծախուց : Պէտք է որ երկիրն ստանայ իւր ծանր զոհողութեան փոխարինութիւնը :

— Ո՞րչափ կը կարծէք զայն :

— Աւելի քան մէկ միլիոն Փրանք :

— Օ հօ :

— Հապա ի՞նչ կարծեցիք : Մեր մէջ կծծութիւն չենք ըներ երբ մեր զաւակները ներկայ յառաջդիմութեանց ամեն նրբութեանց խելամուտ ընելու վրայ է խնդիրը : Օ՛ն , յարեց խօսակիցս ժպտելով , այնքան աւանդամոլ , այնքան փակուած չենք մեր իտէական պատին մէջ , որպէս կը պատմեն :

Ապա , Ուէյ - Հան իրենց անուններով ինձ ներկայացուց իւր երիտասարդ հայրենակիցները : Անոնց մի քանիին անունը միտքս պահեցի հակառակ իրենց այլանդա-

կութեան , — Եանք - Չէ - Չէնկ , Լի - Դա - Չէս , Չէնկ - Չանկ - Լինկ , Չէն - Քինկ - Քիկ , Ուանկ - Սիու - Չանկ , Քաս - Թիւլ - Չիէն : Այս վերջինս , հակառակ իւր ընկերներուն , որք ամենքն ալ կապոյտ հագած էին , սեւ պատմուճան կը կրէր : Կարծեցի թէ մասնաւոր աստիճանի մը յատկանիշն էր այն : Ուէյ - Հան փարատեց սխալ կարծիքս :

— Քաս-Թիւլ-Չիէն , ըսաւ , մեծ սուգի մէջ է , եւ մեծ սուգն , որպէս ի Պրանսա , սեւով կը կրուի : Այլ այնպէս չէ կէս սուգերու և սուգի յաջորդական նուազմանց համար : Ձեր մէջ , աստիճանաբար կը վերադառնաք պայծառ գոյներուն . մեր մէջ , մազերու հիւսկէնէն կը ճանչուի այդ աստիճանաւորումը : . . . Տեսէք Քաս-Թիւլ-Չիէնի հիւսկէնը . բոլորտիք կապուած է սպիտակ մետաքսէ թել մը : Արդ , ցորչափ մօտենայ սուգին վախճանն , այդ թելն եւս քան զեւս պիտի կարճնայ : Երբ թելն աւարտի , սուգն ալ աւարտած է : Այդ օրն , Քաս-Թիւլ-Չիէն իւր պատմուճանը պիտի փոխէ երկնակապոյտ պատմուճանին հետ :

Բարուց այս կէտն յոյժ արտակարգ չէ՞ :

Բաժնուելու ատենս , անցայ բաղնիքի սնտուկներու մէջէ որք լեցուն էին չինական մանր մուկն առարկայներով , ամենքն ալ վաւերական : Ուէյ - Հան խնդրեց ինձմէ ըստ ճաշակիս բան մ'ընտրել : Ըստ հարկին քաշուելէ յետոյ , թէեւ յոյժ տկար կերպիւ , պէտք է խոստովանիլ , ընտրեցի ծխափող մը եւ դուրս ելայ :

ԱՐ Հ Ե Ս Տ Ա Կ Ա Ն

ԿՏԱԻՆԵՐՆ ՍՊԻՏԱԿԵԼ

Ամէն տեսակ ձորձեղէնք , որք բամպակէ , վուչէ , բուրդէ , կանեփէ , մետաքսէ և կամ այլ հիւսկէի նրբաթելերէ չինուած են , ըիջ կամ շատ գունաւոր ու կեղտոտ են երբ գործին դուրս հանուին . մանողն եւ ոստայնակն իրենց գործողութեանց միջոցին օտար նիւթ երով կ'օժեն բանուելիք կտաւին առէջները՝ կտաւին բանումը դիւրացը .

ներու համար . ուստի կերպասն յառաջ քան զներկուիլն կամ տպուիլն կ'ենթարկուի կարգ մը տարրաբանական նիւթոց ազդեցութեանց ոյց նպատակն է հեռացնել բոլոր օտար մարմիններն , եւ ի վերջոյ կտաւին տալ այն սպիտակութիւնն որ կտաւին արժէքը կը բարձրացնէ . ահա այս գործողութիւնը սպիտակելոյ արհեստ կը կոչուին :

Սպիտակելն ոստայնանկութեան եւ ներկարարութեան միջեւ եւ անոնցմէ անբաժանելի արհեստ մը լինելով , կը յուսամ որ հետագայ տողեր մեր Թուրքիացի արհեստաւոր եղբարց ուշադրութիւնը պիտի գըրաւեն :

Սկիւնը ուրեմն «պիտակել» եւ նորա յարակից եղող կարգ մը գործողութեանց վրայ կարելի եղածին չափ մի համառօտ տեսութիւն ընել :

Մեր ամենուն քաջ ծանօթ է թէ արեւուն լոյսն գորգերու եւ վարագոյրներու գոյներն անհետացնելու զօրութիւնն ունի . գրեթէ ամէն առարկայ լուսոյ այս ազդեցութեան ենթակայ է . միայն եւ մինչեւ իսկ քարը , կը կորուսանեն իրենց գոյնն երբ շարունակ արեւու լոյսին ենթարկուին . այս գուռատունն կ'աճի երբ մերթ ընդ մերթ անձրեւ տեղայ անոնց վրայ :

Մեր նախնիք ընդօրինակելով բնութեան գծած այս եղանակն , իրենց կտաւները լուսոյ եւ ջրոյ ազդեցութեանց կ'ենթարկէին . ջրին այնքան առատ ի բնութեան եւ լոյսն առանց դրամի ուղղւածին չափ գանուելով մեծ դիւրութիւն կայ արդարեւ սոյն եղանակն ի գործ ածելու , եւ արդի գիտութիւնն եւս այս գրութեամբ սպիտակելն չէ մերժած . սակայն ներկայ տարիներուս մէջ արագութիւնն , այսինքն խառնակ , այնքան մի մեծ դեր կը կատարէ յարհեստագործութեան որ չենք կարող ամիսներով սպասել որպէս զի մայր բնութիւնն հաճի մեր խնդիրն կատարել , ուստի ստիպելու ենք զինք որ կամ աճապարէ եւ կամ մեզ համար մի ուրիշ արագ եղանակ մը գտնելու ենք :

Գրեթէ մի դար առաջ գիտնոց ուշադրութիւնը դարձած էր նիւթի մը վրայ , այն է հանրածանօթ քլորոն , որ միանալով նատրի (sodium) կը կազմէ քլորուկ նատրի (chlo-

rate de soude) այսինքն մեր կերակուրի համար գործածած աղն որ բնութեան մէջ առատ է . քիչ յետոյ քլորի սպիտակացուցիչ յատկութիւնը գտնուելով յօդուածիս նիւթեղող արհեստին ընդարձակ ասպարէզ մը բացուեցաւ . քլորը միակ մարմինն է որոյ վրայ կը դնէ իւր յոյսն արհեստաւորը . նորա սպիտակելոյ կիրառումն ժամանակի եւ աշխատութեան մեծ խնայողութիւն յառաջ կը բերէ , այնպէս որ երբեմն միջնորոտային ազդեցութեանց ամիսներով ենթարկումն այժմ մի քանի օրերու կարօտ է :

Ի՞նչ է քլորի ազդեցութիւնն բուսեղէն հիւսելի նրբաթելերու վրայ որով զանոնք կ'սպիտակէ . ահաւասիկ հարցում մը զոր անշուշտ պիտի ընեն ընթերցողը , սակայն նորա ներգործութեան ինչ կերպով լինելն չը բացատրած պարզենք հոս խնդրոյն վիճակագրութիւնն . —

Տարրաբանական տեսակէտով քլորի կիրառումն (սպիտակելոյ) հետեւեալ տեսութեան վրայ հիմնուած է , այն է քլորին դիւրութիւնն տալ որպէս զի սպիտակութիւնը առարկային վրայի գուռաւոր մարմնոց հետ միանայ եւ ուրոյն բաղադրութիւն մը կազմէ . սոյն բաղադրութիւնն յետոյ ի բաց վանել դիւրին է : Ահաւասիկ այս տեսութեան վրայ հիմնուած է բովանդակ սպիտակելոյ արհեստին խարիսխը :

Այժմ ազատ ենք խնդրոյն մանրամասնութեանց մէջ մտնելու . մեր սպիտակելիք առարկայն ուղղակի քլորի ներկայութեան չը կոչուած , ուրիշ երկրորդական գործողութիւններէ պիտի անցնի զորս պէտք է ուշադրութեան առնուի :

Չը մանուած բամպակն (сгш) մաքրուելու , մանուելու , ոլորուելու եւ հիւսուելու գործողութեանց միջոցին որոշեալ քանակութեամբ ճարպ եւ աղտ կը ծծէ , ուստի պէտք է յառաջ քան զամենայն ի բաց վանել զանոնք որպէս զի այնուհետեւ սպիտակման ենթարկուի :

Բոլոր վերոյթուեալ տողերէ կրնանք ըսել թէ սպիտակելն երեք գլխաւոր մասերէ կը բաղկանայ .

1⁰. Առարկային վրայէն աղտն ի բաց վանել .

2⁰. » » ճարպն » »

3⁰. Քլորի միջոցաւ անհետացնել գուռաւոր նիւթերն :

Առաջին գործողութիւնն, որ է աղուն հանել, դիւրին է. պարզ լուացումն ի ջուր կը բաւէ այդ մասին:

Երկրորդ գործողութիւնն այսինքն ճարպային նիւթերն ի բաց վանել պարզ լուացումով չէ կարելի. առ այս կտաւն կամ ինչ որ է մեր սպիտակելիք առարկայն պէտք է կրաջուրի կամ ո՛ր և իցէ կալաքարի (alkali) մէջ եռացնել, որով ճարպն անոնց հետ միանալով տեսակ մը օճառ կը կազմէ զոր դիւրին է հանել լուացմամբ: Այս նախապատրաստական գործողութեանց միջոցին յորում առարկայն յաջորդաբար կրաջուրի թթուներու եւ կալաքարերու լուացման կ'ենթարկուի, պէտք է նաեւս ընդմիջաբար մաքուր ջրով եւս լուանալ, որով բաւական կ'սպիտականայ, թէպէտ և շատ թերի կերպով և ահա սոյն թերութիւնն անհետացնել երրորդ գործողութեան այսինքն քլորին վերապահուած է:

Քլորով կատարուելիք այս երրորդ գործողութիւնն երկու եղանակ ունի:

Առաջին եղանակով առարկայն ուղղակի քլորի ազատ վիճակի ազդեցութեան կ'ենթարկեն, (քլորի ազատ վիճակ ըսելով պէտք է հասկնալ կամ կազային վիճակին մէջ եւ կամ ջրոյ մէջ լուծեալ հեղուկ վիճակին մէջ):

Երկրորդ եղանակով քլորն խորսխի մը բազադրութեամբ ի կիր կ'արկանեն. այդ խորսխին ընդհանրապէս կրածինն է (calcium) որ թթուածնի հետ միանալով կը կազմէ կիրն (chaux):

Առաջին եղանակով սպիտակելն արագ և ազդու է, սակայն սոյն պարագային մէջ քլորն կրնայ ըլլալ որ պէտք եղածէն աւելի ներգործէ եւ այրէ կամ ազականէ թերերն, իսկ երկրորդ եղանակն աւելի ապահով ի գործ կը գրուի, թէպէտ եւ այս պարագայիս մէջ անգամ վերջին ծայր զգուշութիւն հարկաւոր է որպէս զի ենթաքլորակ կրոյի (chlorate de chaux) բազադրութիւնն, ջերմութիւնն եւ ժամանակի տեւողութիւնը չափը չ'անցնին, որովհետեւ փոքր ժամանակի երկարում անյաջողութեան կը գատապարտէ գործողութիւնն:

Թուենք հոս քլորի գործածութեան եւ նորա յաջորդող լուացմանց եղանակն:

Քլորակ կրոյն մեծ քանակութեամբ ջրոյ մէջ կը խառնեն եւ ուղղած աստիճանին

կը բերեն, վասն զի կտաւին տեսակին համեմատ կը տարբերի ջրոյ քանակութիւնն. այս խառնուրդին մէջ կտաւը կը դնեն ուր ութ ժամու չափ կը մնայ, այնուհետեւ ծծմբական թթուութիւն թեթեւ լուացման կ'ենթարկուի ուր թթուն միանալով կրածնի (calcium) հետ կը կազմէ ծծմբատ կրածնի (sulfate de calcium) որով քլորակ կրոյի քլորոն մինակ մնալով կը ներգործէ ազատորէն կտաւին գունաւոր մարմնոց վրայ. յետ այսորիկ մի քանի ժամուան լուացումով կ'ըլլէ թուն կ'անհետացնէ. կտաւին գունաւոր մասն որ քլորի հետ միացած էր, անհետացնելու համար, բնածխատ նատրոնի (carbonate de soude) լուծեալ ջուրի մէջ խառնուրդով եռացնելով ի բաց կը վանեն. վերջապէս մի երկրորդ անգամ եւս թթուի մը ներկայութիւնն անհրաժեշտ է, որով կտաւին վրայ մնացած ուտանային մարմինք կ'անհետանա եւ որով գործողութիւնն կը պրծի: Քլորով սպիտակելոյ այս եղանակն երկու օրուան կը կարօտի լոկ, սակայն լաւագոյն է միշտ աւելի երկայն միջոցի մէջ կատարել վասն զի արագ գործողութիւն մը ուղղածէն աւելի ազդու խառնուրդներ կը պահանջէ եւ գործողութեան այլ եւ այլ քայլերուն մէջ պարզ ջրոյ զօրաւոր լուացումներ պէտք են, ապա թէ ոչ առարկայն կը դեղնայ կամ տեղ տեղ բծեր երեւան կ'ելլեն, այս մասին զգուշութիւնն շատ աւելի հարկաւոր է եթէ կտաւն ներկուելու յատկացուցած են, որովհետեւ գոյներն կտաւին վրայ առաջուց մնացած ներգործիչ տարրերէն կ'ապականին. պէտք է յիշել ի մէջ այլոց թէ քլորակ կրոյն ժամանակի հետ իւր զօրութիւնը կը կորսնցնէ ուստի զայն կը փորձեն աստիճանաւոր ընդունարանի մը մէջ դնելով եւ վերան կը դնեն մի քիչ արեւածաղկի կապոյտ գոյն եթէ զօրութիւնը չէ կորուսած, խորսխ մ'ըլլալով անտարակոյս կապոյտ գոյն կարմրի սիւրի դարձունէ, այս է ահա այն եղանակն զոր ի գործ կը դնեն արհեստավետք և գոհացուցիչ արդեանց կը յանգին:

Մինչև հոս բացատրուած եղանակն բոսական նրբաթելոց համար է միայն, կենսական թերութեան այսինքն բրդեղինաց մետաքսի եւ յարմար չէ, վասն զի սոյն կեբպով ո՛չ թէ չ'սպիտակուի, այլ նոյն իսկ թերութեան կ'աւելնի ուստի տարբեր կերպով ի

գործ կը դրուի բրդեղինաց սպիտակումն :

Ինչպէս յայտնի է բուրդն մեծ քանակութեամբ ճարպ կը պարունակէ եւ տակաւին չը մանուած անոր տրուած լուացմունք չատ թերի են , ինչպէս ի բամպակեղէնս նոյնպէս ի արդեղէնս առաջին լուացումէ մը զինի մեր երկրորդ գործողութիւնը պիտի լինի վաճակ ճարպն , սակայն կալքաքարով մը ածառացնելու դրութիւնն անյարմար է բրդեղինաց , որոց մի տարբեր եղանակն կայ . եւ ահաւասիկ այն եղանակն :

Կ'առնեն հին մեզ զոր պաղ ջրոյ մէջ խառնելով մէջը կը դնեն բրդեղէնն ուր 20 վայրկեան կը մնայ արս միջոցին բնածխատ աւշակը (carbonate d'ammoniaque) որ մէղին տարբաղադրումէն կը գոյանայ ճարպին հետ կը միանայ եւ կը կազմէ մի գատ տարր զորն որ պարզ լուացում մը կ'անհետացնէ . բայց միայն անտեղութիւնն որ կը գոյանայ այս կերպէն սա է թէ գարշելի հոտ մը կը բուրէ բրդեղէնէն , ուստի մէղի տեղ երբեմն քարայրնաթ տը սուտ (սոտա) եւ ածառ կը գործածեն :

Որչափ որ բամպակեղինաց սպիտակացման համար ջերմութիւն հարկաւոր է , այնքան ալ բրդեղինաց համար զգուշանալու է ջերմութենէն , մինչեւ անգամ արհեստապետք միջոցներ ձեռք առած են լուացման ժամանակ անիւներու շարժումներէ գոյանալիք տաքութիւնն արգիլելու աղադաւ . այս երկրորդ գործողութեան մէջ ինչպէս որ կալքաքարի տեղ մէզն գործածուեցաւ նոյնպէս ալ երրորդ գործողութեան մէջ բլուն չը պիտի ունենայ իր գերն այլ իրեն տեղ ո'չ նուազ ծանօթ ծծումբն պիտի կատարէ սպիտակելոյ պաշտօնն :

Ծծումբն ո'չ թէ բրդեղինաց վրայի գունաւոր նիւթերն քլուին նման կ'անհետացնէ հալա սոյն գունաւոր նիւթերն իրենց երանգէն զրկելով կը բաւականանայ . մեր ուզածն ալ աւելի բան մը չէ արդէն :

Ծծմբային թթուումն (acide sulfureux) կազմէ եւ դիւրաւ կը լուծուի ջուրին մէջ եւ կրնանք մեր գործին յատկացնել թէ կազ թէ հեղուկ վիճակին մէջ . երբ կ'ուզեն կաղային վիճակին մէջ գործածել , բըրդեղէններն մեծ սենեակներու մէջ տախտակեայ ձողերու վրայ կը կախեն եւ սենեա-

կին դուռն խնամօք փակելէ յետոյ յատուկ ծակէ մը ներս այրող ծծումբ , կը մուծանեն . ծծմբային թթուումն կ'այցելէ սենեակին ամէն կողմերն եւ 24 ժամ շարունակ կը ներգործէ բրդեղինաց վրայ : Անոնք որք կ'ուզեն իբր հեղուկ գործածել թթուումն կը լուծեն ջրոյ մէջ եւ ապա սոյն ջրով կը լուան կերպաններն :

Քալով մետաքսի սպիտակման , այս վերջինս բոլորովին կը տարբերի միւսներէն եւ պարզագոյնն է : Սպիտակելոյ համար ածառոտ ջրոյ մէջ կրկինս կ'առացնեն մետաքսը . եթէ վերջը պիտի գունաւորեն զայն այն առեն ծծմբական թթուումն (acide sulfurique) թեթեւ լուացման ենթարկելու է եւ այս միջոցին մեծ զգուշութիւն հարկաւոր է որպէս զի մետաքսին այնքան նշանաւոր գեղն , փայլն չ'աղոտանայ :

Քլուակ կրոյով սպիտակելոյ արհեստն իւր գաղաթնակէտն հառած է յԱնգլիա ուր Կլասկովի , Նիւ-քասլի եւ Լիվըրքուի քաղաքացի մէջ ընդարձակ գործարաններ կան , որք միայն այս արհեստով կը շահաբերուին . տայր երկինք որ մեր ազգին մէջ եւս գիտնային բնութեան սքանչելեօք հարստանալ :

ՍԱՐԳԻՍ Կ. ԿԻՒՄՇԵԱՆ

Գ Ր Ա Վ Ա Ն

Է Ր Է Մ

(ՊԱՐՍԿԱԿԱՆ ԶՐՈՅՑ)¹

Աղայի որդի Շիդադ շահը մեծ թագաւոր էր :

Նորա պալատը եթէ աշխարհքիս մէջ առաջինը չ'էր , գոնէ կարող էր երկրորդը լինիլ . ընդարձակ էր այդ պալատը մի քաղաքի չափ . ճիններն իրենց բոլոր հարստութեամբ անկարող էին Շիդադի պալատի վրայ չը նախանձել :

¹ Այս զրոյցը քաղուած է Ֆրիդուսի պարսկ հռչակաւոր բանաստեղծի գլուխ գործոց «Շահնամէ»-ից , որը պարսկական պատմութիւնն է տաղաչափութեամբ եւ իւր բոլոր առասպելներով :

Բայց Շիդադի պալատի իւրաքանչիւր բարձր քարի վրայ էր փակուցուած ո՛չ թէ ջրի կաւով, այլ իւր հսկողութեան արեւնով շողախած խառնուրդով:

Նա կողոպտեց մզկիթներ եւ նոցա կանթեղները, նոցա ոսկեղէններն իւր պալատը բերեց, նոցա սիւների յենարաններն իւր ոտից պատուանդան կանգնեց, նոցա սուրբ քարերն իւր հարեմի զբօսանաց աւազանների համար գործածեց:

Նա կողոպտեց ժողովուրդը իւր զբօսանաց համար, նոցա կանանց պղծեց եւ գլխի զարդերը հալեցրեց, նոցա երիտասարդները կոտորեց եւ հայրերի կալուածները ծախեց:

Նա մերկացրեց կոյս անտառն եւ նորա բարձրաբերձ ծառերից քաղաղներ՝ կողմեց, որոնց վրայ փողատէրներին մահացրեց եւ իւր դանձարանը լեցրեց:

Այս բոլորը Շիդադ շահը արեց և դորա համար էր, որ նա մեծ կոչուեցաւ, որովհետեւ ինչ որ մեծ կար ստորացրեց. մեծ մը պէտք էր եւ ինքն էր որ իրեն մեծ կոչեց:

* * *

Եւ Իբնի Մուքաննի իմաստունը Նէսէֆ բաղաբի մօտ, Սիյամ լերան դադաթի վրայ հաստատուած, երեւեցնում էր երկրորդ լուսինը, որոյ ճառագայթները հասնում էին մինչեւ երեք փարսախ տեղ:

Նա ո՛չ ոքի էր երեւում, իսկ ժողովուրդը խռնուած լերան տակ «Ալլահ աքսէր» էր գոռում, երբ երկրորդ լուսինը լողում էր առաջինի ուղղութեամբ դէպի վար — լերան գագաթի վրայ:

Վաթսուն գիշեր էր, որ երկրորդ լուսինի երեւումը դրդեցրեւ էր Իբնը եւ Թուրանը:

Լսեց Ադայի որդի Շիդադը՝ Իբնի Մուքաննիի դործերը, եւ ուղարկեց նորա մօտ մի պատգամաւոր, որ եկաւ ընծայեցրով իմաստունի հորի մօտ, ծառեցաւ դէպի հորը եւ ասաց:

2) Պատժական մի ձեւ է. ոտները կապում են երկու ձեռքած ծառի ճիւղին եւ թողնում են. յանցաւորը պատուվում է մէջ տեղից, ցայժմ կայ այդ ձեւը Պարսկաստանում:

— Ո՛վ Աստուծոյ մարդ, մեծն իմաստուն Իբնի Մուքաննի, կարո՞ղ ես լսել Ադայի որդի Շիդադ շահնշահի խնդիրը:

Եւ այդ միջոցին անյայտացաւ երկրորդ լուսինը, իսկ հորի միջից մի ձայն դուրս ելաւ.

— Աստուծոյ առաքեալ Իբնի Մուքաննի իմաստունը պատրաստ է լսել օժեպի հըրամանը:

Եւ պատգամաւորն ասաց, որ Շիդադ շահը շինել է երկնային պալատը, որոյ նմանը չը կայ աշխարհիս մէջ, որոյ չէ՞քը քաղաք է, որոյ հարստութիւնը ծովու չափ, որ նա լսել է իմաստունի համբաւը եւ կամենում է որ մեծ իմաստունը տեսնէ իւր պալատը եւ դատէ նորան...

Պահ մի լսեց իմաստունն եւ ապա խօսեց.

— Ադայի որդի Շիդադը Աստուծոյ առաքեալ Իբնի Մուքաննիին իւր պալատը կը տեսնէ լուսինների երրորդ քառորդի լրման օրը...

Իսկ լուսինն իւր երկրորդ քառորդի լրման օրն էր, մահիկը չքեղապէս լողում էր կապոյտ երկնակամարի վրայ, չըջապատուած մանր աստղերով:

Գնաց պատգամաւորն եւ յայտնեց Շիդադին իմաստունի խօսքերը: Եւ ուրախացաւ թագաւորը, ու հիւսիսեց որ իւր պալատը զարդարուի իւր բոլոր զարդերով, որ իմաստուն Իբնի Մուքաննի'ն կարողանայ չըռարկել...

* * *

Անցա՛ն օրերը. Իբնի Մուքաննիի երկրորդ լուսինն այլ եւս չ'երեւեց Սիյամի գագաթան վրայ. լուսինը կորցրած իւր ընկերը՝ տխրութեան քողի տակ էր մտել կիսովին եւ ժողովուրդն ալ մ'ցրուած ըստպատմ էր իմաստունին Շիդադի պալատում:

Շիդադն իւր դրախտանման պարտէզի մէջ, իւր հիւրի-փէրիների մէջ տեղ՝ վաշելում էր գինին, երբ Իբնի Մուքաննին յայտնուեցաւ ծառերի ետեւից եւ գոչեց.

— Շիդա՛դ Ադայի որդի, Աստուծոյ առաքեալ Իբնի Մուքաննին է, որ եկել է քեզ մօտ, ի՞նչ ունիս նորա հետ:

Վեր թուա թագաւորը, նստեցրեց իմաստունին իւր մօտ, նորա մօտ իւր կանայք էհրէմ¹ էին, որովհետեւ իմաստունն աշխարհքի մարդ էր . . . Աստուծոյ մարդ էր :

Եւ տեսաւ իմաստունը նորա պալատը, երկու երկար օրեր պտըտեց նա նորա մէջ, եւ շահը չը տեսաւ նորա դէմքի վրայ զարմանքի մի նշան իսկ : Իսկ Մուքաննին գուցէ աւելի լաւերն էր տեսել, բայց գուցէ իսկ քարդ-ն² մարդ էր :

Հարցրեց նորան թագաւորը, իսկ իմաստունն ասաց .

— Շիդա՛դ, որդի Ադայի, պալատդ շատ սքանչելի է, ճիները չ'ունին նմանը, բայց ո՛ւր է Էրէմը . . . :

Դանը չ'իմացաւ թէ ի՞նչ բան էր Էրէմը եւ իմաստունը նորան բացատրեց ու գնաց ծածկուելու Սիյամ լեւան խորերի մէջ :

Շիդադի պալատին Էրէմն էր պակաս :

Եւ Շիդադը ձեռնարկեց այդ պակասը լրացնելու . կտնչեց ճարտարապետներ, ամբողջ Իրան Թուրանը սպասում էր :

Եւ երկու տարիից յետոյ լնցաւ Էրէմը — այն պարտէզը, որոյ ծառերն էին ոսկի եւ արծաթ եւ նորա տերեւները զմրուխտ, եւ պտուղները մեղեսիկ, յակինթ եւ մարգարիտ . իսկ պարտիզի դետինը մուշկ ու բուրկէն :

Եւ պարտէզն էր ընդարձակ եւ ծառերն անհամար :

Ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ եւ ո՛չ էլ ակնեղէն մնաց Իրանում եւ Թուրանում, Նիշապուրի բերուզը դատարկուեց, ժողովուրդը տուե՛ց ու տուեց :

Շիդադն աւերեց աշխարհ . սովը տիրեց Իրանում եւ Թուրանում. իսկ Էրէմը ընդարձակվում էր ու ընդարձակվում :

Արեգակը խաւար էր Էրէմի պտուղների առջեւ, լուսինը լոյս չ'ունէր, աստղերը փախնում են ակնեղինաց փայլութեան առջեւից, իսկ ժողովուրդը դողում էր եւ գոռում :

— Հա՛ց . . .

* * *

1) Նամէհրէմի դրականը, այսինքն բաց :

2) Խորամանկ :

Մուշկի եւ բուրկէնի հօտը հասնում էր մինչեւ Դամէվէնդ, ոսկիի եւ քարերի լոյսը մինչեւ Սիյամ լեւը, ուր խաւարեցնում էր Իպնի Մուքաննիի երկրորդ արեգակը :

Եւ հրամայեց Ադայի որդի Շիդադը՝ պատրաստել իւր եւ իւր հարեմի համար խնջոյք Էրէմի մէջ, որին նա դրախտ կոչեց եւ յանդգնեցաւ ասել, որ Աստուած իւր արքայութիւնն իրեն է դրկել :

Մորթեցին զառներ, բերին անուշահամ գինին եւ ահա թագաւորը մեծ բազմութեամբ, շեփորներով եւ ուղտերով ելաւ իւր պալատից եւ դէպի Էրէմը քայլեց :

Նորա առջեւից, նորա ետեւից ամբոխը «հա՛ց» էր աղաղակում, իսկ նա աչքը Էրէմի բոցափայլ տեսքի վրայ ուղղած, չէր լսում, շտապում էր մտնել այն տեղ, ուր գուսանքն արդէն հրեշտակների եւ քերովբէների ձեւ առած նուագում էին :

Մեղա՛յ, մեղա՛յ . . . կարծես Աստուած ինքն էր, որ դրախտն էր մտնում . . .

Եւ մօտեցաւ նա Էրէմի ականակուռ դռան, իջաւ ձիուց, ի՛նչաց եւ ոտը ներս դրեց :

Յանկարծ երկինքը մթնացաւ եւ Ֆէրվէրդին¹ իւր կայծակէ սրով երեւցաւ Շիդադի առջեւ :

— Շիդա՛դ, գոչեց նա, աշխարհ աւերեցիր եւ ուղեցիր դրախտը շինել . . . մեռի՛ր առանց վայելելու նորան :

Եւ աղջամուղջ պատեց ամէն կողմ, որոյ միջից փայլատակեց Ֆէրվէրդիի կայծակէ սուրը :

Ինկաւ Շիդադն և նորա արիւնն իսկոյն ծծեց հողը :

Իսկ երբ աղջամուղջը փարատուեց՝ Էրէմը չը կար, նա հողի հետ հաւասարուել էր, Շիդադի շքեղ պալատի հետ :

Կանգնեց ժողովուրդն Էրէմի տեղում մի փայտ, որոյ վրայ Ասէդ բանաստեղծը գրեց այս տողերը .

Էրէմը ո՛չ թէ Շիդադը շինեց —

— Որ Իրան ու Թուրան քակեց, կործանեց,

Այլ նորան քաջն Ֆէրվէրդին կանգնեց

— Որ մեզ Շիդադից, փա՛ռք քեզ, ազատեց . . .

Վ. ՓԱՓԱՋԵԱՆՅԱՆ

1) Երկնային դրախտի պահապան հրեշտակը :

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԱՌ ՆԷ

Թէ լինէի իշխան աղգաց զանազան,
Ո՛ կոյս, տայի զիմ պետութիւն ընդարձակ,
Զիմ շրջեղ կառս եւ զիմ ոսկի գաւազան,
Զազգս ու ազինս հըզօր գահուն հըպատակ,
Ըզգըլսոյս թագ անխախտիղ ոսկեհուն,
Զիմ բաղանիս կերտեալ համակ ի պօրթիւր
Եւ ըզտորմիղ նաւուցս անթիւ անհամար՝

Միակ ակնարկիդ համար:

Թէ լինէի Աստուած յերկինս ի բարձունս՝
Զերկիր, զայեր ծըփուն ալեօք վէտ ի վէտ,
Զերկնաբընակ լուսապայծառ զըւարթունս,
Ըզգեւս ընկճեալ իմ օրինաց տակ յաւէտ,
Ըզքառս, ոյր գոգն արգաւանդ է համբուն,
Ըզյաւիտեան, ոյր շիբ ըսկիգր եւ ոչ հուն,
Եւ զանջըբպետ, զերկինս, աշխարհս ան-

համար՝

Միակ համբոյրիդ համար:

Թարգմանեց

Վ. ՀԻԻԿՈՅ

Յ. ԹԱԹԱՐԵԱՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԹԱՄԶԱՐԱ

Թամզարա, որ Նիկոպոլէն գէպի հիւ-
սիս մի ժամ հեռաւորութեամբ լերանց շրջ-
թաներով չըջապատեալ եւ ծառազարդ
պարտէզներու մէջ բազդրակարկաչ առուակ
ներովն ու մի փոքրիկ անտառովը գեղեց-
կատեսիլ չովիտ մը կը կազմէ, ի դարեան
յոյժ վայելագեղ տեսարան մը կ'ընծայէ
բնութեան սքանչելեաց, իւր բնակչաց, եւ
նա մանաւանդ անցորդաց՝ որք հիանալով
կ'անցնին հասարակաց նորուղիէն եւ կ'եր-
թան ի Կիրասոն, ի Պոլիս եւ յայլուր: Թամ-
զարա իւր անցելոյն մէջ 800 տուն բնա-

կիչներէ բաղկացեալ ըլլալով եւ իւր բնակչաց
ինքնահնար արհեստովն հեռաւոր քաղաք-
ներու հետ յարաբերութիւն հաստատելով
մեծ համբաւ ստացած էր թէ եւ առեւ-
տրական հրապարակին վրայ, սակայն ա-
ռաջին՝ եւրոպական ուղորանաց ի Թուրքիա
մուտն, եւ երկրորդ՝ արհեստաւորաց մե-
ծագոյն մասին անմիութիւնն արհեստին
զարգացման եւ յառաջդիմութեան մեծա-
մեծ արգելքներ հանելով, սակայն եւ զը-
նակիչս գաղթել հեռու քաղաքներ եւ օտար
երկիրներ, այնպէս որ այժմ 800 տուն բը-
նակիչներէ հազիւ 350 տուն մնացեր են,
որոց գրեթէ հարիւրն ալ տաճիկ հայրե-
նակիցներ Հայ բնակիչք տարազագործու-
թեամբ կ'ըբաղին, որք թէպէտ բաւական
ճարտար եւ յաջողակ են իրենց արհեստին
մէջ, սակայն առ ի չգոյէ նիւթականի չեն
կարող զարգացնել զայն իւր ամէն ճիւղե-
րովը, որուն համար արհեստն իւր արժէքը
կորուսած եւ արհեստաւորք մեծաւ մա-
սամբ վհատած են, վասն զի օրական սլա-
րէն մը հայթայթելու չափ միայն կրնայ դո-
հացում տալ արհեստաւոր դասուն, որոյ
սլատառն ալ իրենց անմիութիւնն է:

Թամզարայի գաղթականաց մեծ մասն ի
Կիրասոն եւ ի Պոնտոս կը դանուի այժմ եւ
վաճառականութեան մէջ բաւական յաջող
վիճակ մ'ունի. նա չէ մոռցած իւր բնա-
գաւառը Թամզարան: Այլ անոր անկեալ
վիճակն ի նկատ առնելով, կ'ուզէ օգնել ա-
նոր նիւթապէս եւ բարոյապէս, որոյ ապա-
ցոյց կրնամ տալ ասկէ քսան տարի յառաջ
յանուն տեղոյս Ս. Գէորգ վանուց կազմը-
ուած ընկերութիւնը, որոյ դրամադուլսը
բաւական մեծ գումարի մը հասած եւ այժմ
պատուաւոր հայրենակցաց քով շահու դըր-
ուած է սակայն մի բանի տարիներէ. հետէ
ընկերութիւնը խանգարուած ըլլալով, նը-
պատակն անգործադրելի մնացած եւ ի
մոռացօնս դասուած էր. վերջին երկու
տարուան մէջ Հայպետեան Գէորգ Էֆ. ի
ջանիւք յիշեալ ընկերութեան դրամադը-
լսոյն տոկոսէն 20 օսմ. ոսկի առնուե-
լով վարժարանի ծախուց յատկացաւ, սլայ-
մանաւ որ այս գումարը տարիէ տարի ան-
խախտ վճարուի, սակայն այժմ ընդ մէջ
տեղացի եւ Կիրասոնաբնակ Հայոց քաղա-
քական տրոց համար յառաջ եկած անհա-

մաճայնութեան մը պատճառաւ, թէպէտ չը վճարուիր նոյն գումարը, բայց չեմք յուսար բնաւ որ նոցա ազատախոհ է ողջամիտ մասը սոյնօրինակ պատճառաւ մը մերժէ իւր խոստումը:

Թամզարայի շուրջը կը գտնուին զանազան տեսակ հանքեր, որոնց նշանաւորն է «Լիճէսի» գիւղին տնուամբ կոչուած արծաթի հանքը, երեք ժամ հեռու ի Թամզարայէ:

Թամզարային՝ ինչպէս աւանդութիւնը կը հաստատեն, Անւոյ գաղթականութենէն մաս մը բաժնուած և Փոքր Ասիոյ այս գեղեցկագիւղի վայրն եկած ընտրած եւ իւր բնակութեան տեղ հաստատած է: Տեղւոյս Հայ բնակիչք ճարտար են եւ գործունեայ:

Թամզարայի բնակիչք ունին նաեւ բարի ձրբեր եւ զգացումներ, որք են, հիւրասիրութիւն, բարեպաշտութիւն եւ բարեգործութիւն, զոր ի նախնեաց անտի դարձով եւ արդեամբ ցուցած են, եւ այժմ իսկ իրենց անկեալ վիճակին բաղդատմամբ միշտ կը ցուցնեն, յանուն եկեղեցւոյ եւ վարժարանի կտակներ թողով, այնպէս որ անձնիւր անհատ փափոք մ'ունի մահուանէ վերջ իւր անունն անյիշատակ չը թողելու. այս գովելի յատկութեանց հետ նաեւ վառ պահած են իրենց սրտերուն մէջ ազդային զգացումը. մեծաւ մասամբ ուսումնասէր և ջերմ ընթերցասէր են. փոքր գիւղաքաղաքի մը անկարող ժողովուրդն ըլլալով հանդերձ ճանչցած են ուսման յարգն եւ քան զհային ուսուել զոհողութիւններ կ'ընեն դաստիարակութեան եւ ուսման ծաւալման համար՝ բաղդատմամբ դրակից հարուստ քաղաքաց, որոյ ապացոյց ունիմ տեղւոյս երկու կտակարար բարերարներն, մին խաչեան բարեհամբաւ զարմէն եւ միւսն խրիմեան գերդաստանէն, այս երկու հանգուցեալ մեծագործ անձինքն, որոց առաջինն 250 եւ երկրորդն 340 օսմ. ոսկւոյ կտակ թողած են յանուն Ս. Գէորգ վանոց եւ Արամեան երկսեռ վարժարանաց: Այս կտակի գործոյն կատարման եւ յաջողութեան մէջ՝ մեծ գործունէութիւն ցուցած են գիւղաքաղաքիս ազգասէր գասէն Տեար Գէորգ էֆ. Հայպետեան եւ Մեծ. Սարգիս էֆ. Խոշեան: Այս գումարներով Նիկոպոլսոյ մէջ անշարժ

կալուածներ գնուած են, որոց եկամուտը վանքի եւ վարժարանի ծախսոց յատկացած է. վարժարանն որ Արամեան անունը կը կրէ, Ս. Թագաւոր եկեղեցւոյ Քարէ-պան. դռին վրայ շինուած է, գլխաւորաբար երկու բաւական ընդարձակ սրահ ունի, որոց մին բարձր. Նախակրթարան, միւսն Ընտելարան: Պատուարժան Հոգաբարձութիւնն՝ որոյ պետն է Հայպետեան էֆէնտի եւ իւր օգնական Մանաւաղեան Համբարձում էֆէնտի, նոյն յարկին մէջ Մանկավարժոց մ'եւս բացաւ այժմ, որով երեք սրահէ և երկու դասարանէ կը բաղկանայ ամբողջ շէնքը. ունի 150 ի չափ աշակերտ որոց զըրեթէ կէսէ աւելին աղքատ ըլլալով, ձրիաբար կ'ուսանին, ի շնորհս յիշեալ բարերարաց. ունի երկու պաշտօնեայ մին Ընտելարանի և միւսն բարձր. Նախակրթարանի. Ընտելարանի մէջ աւանդուած դասերն են, Մայր-լեզու, Քրիստոնէական, Թուրքան. Քերականութիւն. իսկ բարձր. Նախակրթարանի մէջ կ'աւանդուին, Բարոյական դասաստութիւն բերանացի, աշխարհաբան եւ զրաբան լեզուաց վրայ քերականական կրթութիւն եւ շարադրութիւն, Մաղիկ եւ Ճաշակ հասուածներէ, Պատմութիւն, Թըւաբան. ճիւղերովը, Աշխարհագրութիւն, արդի գրական լեզուի ոճով զանազան նիւթերու վրայ շարադրութիւն, Տաճկերէն և Գաղղիերէն լեզուաց ընթերցանութիւն գըրավարժութեամբ եւ թարգմանութեամբ հանդերձ. այս դասերն ըստ ծրագրի կ'աւանդուին, և ուսմանց ընթացքը հինգ շըրջան ունի:

Զեմ կրնար առանց յիշելու անցնիլ որ Հայպետեան էֆէնտի ջանիւք Պոլսէն վարժուհի մը բերուելով, աղջկանց վարժարան մ'եւս բացուած է, որ այժմէն արդիւնաւէտ ապագայ մ'ունենալ կը խոստանայ: Թէ՛ արական եւ թէ՛ իգական սեռին վարժարանաց տարեկան ընդհանուր ծախքն է 85 - 90 օսմ. ոսկի, որոյ $\frac{3}{4}$ եւս թէ՛ կարող աշակերտաց թոշակէն եւ թէ՛ արտաքին կարգի եկամուտներէ կը մատակարարուի:

Թամզարա ունի նաեւ Ս. Գէորգ անուամբ մի վանք, որ իւր գեղեցիկ դրիւքը, հողային եւ կալուածային բաւական հարստութեամբ, Թամզարայի փառքը կը

յաւելլու արդարեւ , այլ աւանդ , որ այժմ աւերակ է , եւ որոյ շինութեանը համար տեղոյս հասարակութիւնը Պատրիարքարանի միջոցաւ Բ . Գռնէն հրաման խնդրած է եւ պատասխանին կ'սպասէ :

Վիճակիս ազգային գործոց նաւուղիդն Պետրոս Ծ . Վ . Ներկարարեանն է , որ չուրջ տարի մ'է որ իւր վիճակի կեդրոնէն հեռացած՝ Նրկոտասան Առաքելոց վանքն առանձնացած է , զոր վերանորոգելով 12 որբ աղքատիկ մանուկներէ բաղկացեալ մասնաւոր կրթարան մ'ալ բացած է անդ . կը շրջի երբեմն ի թեմական գիւղօրէս , առաջնորդական արոց հաւաքման և ժողովրդոց հոգեւոր մխիթարութեանն համար . իւր սըրբազան կոյմանն արժանաւոր եկեղեցական մ'է ըստ ամենայնի , ուսումնասէր , զգայուն եւ եռանդուն ժողովրդասէր , որոյ ապացոյցը տուած է իւր նոր սլաշտօնավարութեան միջոցին . այլ աւանդ որ տեղացի ազգայնոց անվտանգութիւնն ու խռովութիւնը , մեծ խռընդոտ հանած է իւր առջեւ , նորա պագմանց իրական գործադրութեանը :

Տ . Ս . Զ .

Դ Ա Տ Ա Կ Ա Ն

ԶՈՐՍ ԶԱՒԱԿՆԵՐՆ ՍՊԱՆՆՈՂ ՄԱՅՐ ՄԸ

Յունիս 1 ին , Պէրնայի (Զուիցերիա) եղեռնադատ ատենին առջեւ կը տեսնուէր եղբերական և մահաբոյր դատ մ'որ ի Զուիցերիա եւ Զուիցերիայէն դուրս ամենուրեք մեծ սրտայուզութիւն պատճառած է : Դատին դիւցազնուհին է Տիկին Լոմպարտի , որ տարի մ'առաջ սպանեց իւր չորս զաւակները : Մեր ընթերցողը թերեւս չեն գիտեր այդ սքառաւոր տուաճն , ուստի հարկ կը համարինք պատմել : Տիկին Լոմպարտի վշտաշարժար կեանք մը կը վարէր իւր ամուսնոյն ձեռքէն , որ հաւատարիմ չէր իրեն եւ յաճախ բրտութեամբ կը վարուէր հետը : 1885 մայիս 1 ի գիշերը , տաժանելի օր մը անցունելէ յետոյ , որոշեց ի

գործ դնել քստմնելի մտադրութիւնն իւր յղացած էր երկար ատենէ ի վեր . կ'ուզէր անձնասպան լինիլ , մեռցնելէ յետոյ իւր չորս զաւակներն՝ որոց անդրանիկը դեռ եօթն ու կէս տարու չը կա՛ր :

Գաւաթ մը օղի խմելէ եւ բաժակի մը մէջ թոյն լեցնելէ յետոյ , ածելի մը առաւ եւ կտրեց այդ վատաբաղդիկ արարածոց վրիզը . յետոյ ձեռները լուաց եւ մտաւայառութիւն մէջ նետեց յառաջուց գրուած նամակ մը յորում իւր բարեկամուհիներէն միոյն կը ծանուցանէր իւր սոսկալի մտադրութեան գործադրութիւնը : Ապա , սենեակը վերադառնալով , հանուեցաւ , պատրաստած թոյնը խմեց եւ անկողնոյն վրայ տաքածուեցաւ , մահուան սպասելով :

Քանի մը ժամ յետոյ , Լոմպարտի տուն դարձաւ եւ մութին մէջ պառկեցաւ : Քանի մը վայրկեան վերջ ընդոստ արթննալով իւր կնոջ տարօրինակ շնչառութենէն և կրտսերադոյն որդւոյն հռնդիւնէն , ճրագը վարեց եւ տեսաւ գործուած ահուելի ոճիրը : Վշտէն խեղցնոր , դուրս նետուեցաւ ի խնդիր տանը բժշկին , մինչդեռ ոստիկանք կ'երթային իրողութիւնը ծանուցանել դատաւորաց :

Բժիշկն եկաւ հաստատեց երեք մեծերուն մահը . կրտսերադոյնը կ'ապրէր տուկաւին : Տիկին Լոմպարտի զգայազիրկ վիճակի մը մէջ կը գտնուէր ուսկից դժուարաւ հանեցին զայն : Խելքը զուլը գալուն պէս , ամէն ինչ խոտովանեցաւ :

Ժամանակ մը հիւանդանոց մնալէ յետոյ , Սէնդ - Անդուանի բանտը փոխադրուեցաւ : Քանիցս իւր մտաւորական վիճակը կասկածներ յարոյց նորա պատասխանատուութեան վրայ , եւ քանի մը նշանաւոր բժշկաց երկար եւ մանրակրկիտ քննութեան ենթարկուեցաւ : Ասոր համար է որ տարի մը անցաւ առանց այս տխուր գործն իւր լուծումն ստանալու :

Դատական վիճարանութիւնը սկսան յունիս 1 ի առաւօտուն , ի ներկայութեան արտասովոր բազմութեան մը : Ամբաստանադոյն ընթերցման միջոցին , ամբաստանեալն , ի բաց առեալ դիմաց քանի մը կրծկուսներ , անպգած մնաց . գրադիրն եւ հասարակութիւնն անկէ առելի յուզեալ էին : Երբ իրեն ներկայացուցին արիւնոտ ածելին

եւ նախագահն հարցուց թէ կը ճանչէ՞ր զայն, հանդարտ ձայնիւ մը պատասխանեց. « Այդէկ մը չեմ գիտեր թէ ա՞յդ է, սենեկին մէջ երկու ածելի կար: » Նոյնպէս հանդարտութեամբ պատմեց ոճրէն առջի պարագայները. « Գալով նոյն խի ոճրին, ճըշդութեամբ չը յիշէր զայն, եւ իւր յիշողութիւնն, այնքան հաւատարիմ ոճրէն առջի ամենաչնչին դէպքերուն համար, յանկարծ կը կասի բուն գործողութեան առջեւ: »

Վիճաբանութիւնը երկու օր աեւեցին, եւ գլխաւորապէս լցուած էին օրինական բժշկութեան փորձադէտներու եւ քանի մը օտար հոշակաւոր յիմարադիտաց տեղեկագրերով: Այդ գիտնոց մեծ մասը կը հաստատէին թէ Տիկին Լուսարտի պատասխանատու չէր իւր գործերուն. ճիշդվրայի նշանաւորագոյն փաստաբաններէն մին, Պ. Լաշալ, մեծ տաղանդով եւ պերճախօսութեամբ պաշտպանեց անոնց կարծիքը: Իւր յաճախորդին արձակումը խնդրելով, ծանոյց թէ ամէն միջոցը ձեռք առնուած էին անմիջապէս զայն յիմարանոց մը դնելու համար: Խորհրդակցութենէ մը յետոյ, որ իբր երկու ժամ տեւեց, երդուեալ դատաւորը անպարտ յայտարարեցին հէգ կիւնն, եւ նիստը վերջացաւ, տասն եւ չորս ժամ տեւելէ յետոյ:

Պէտք է ըսել նաեւ թէ Լուսարտիի զաւակաց կրտսերագոյնն, հախառակ իւր սոսկալի վէրքին, բոլորովին առողջացած է՝ չը նորհիս ստացած ընտիր խնամքներուն. այլ այդ դժբաղդն մինչեւ իւր կենաց վերջը պիտի ընչէ վզին վրայ բացուած ծակէ մը, եւ խօսելու դժուարութիւն մ'ունի որ նմանապէս անհետ չը պիտի լինի:

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՆՆԵՐԸ

Թիի 21.	(Մասիս թիւ 3814)
» 27.	» » 3820)
» 28.	» » 3820)
» 30.	» » 3823)
» 31.	» » 3824)
» 32.	» » 3825)

ԽՆԴԻՐ ԹԻԻ 29

ԼՈՒԾՈՒՄՆ

+ և + + 1 ըլլան երկու հետեւակից թիւերն, կ'ունենանք անմիջապէս հետեւեալ հաւասարութիւնը.

$$+ (+ + 1) = 2256 \text{ կամ}$$

$$+^2 + + - 2256 = 0$$

զոր լուծելով, կը գտնենք խնդրուած թըւոց համար 47 եւ 48:

ԱՆՈՒԱՆՔ ԼՈՒԾՈՂԱՅ

Տ. Ս. Յ. Յ.

Գատը-դիւղ

Տ. Մ. Սարաֆեան

Աշակ. Պէրպէր.

Եան վրժինի.

Տ. Կ. Նաւասարդեան,

Իզմիր

Տ. Ս. Պետրոսեան,

Կիրասօն

ՍՂԵՐԻ. Տ. Պ. Սրապեան. — Թիւ 26 խնդրոյ լուծումներդ ուղիղ է: Ձեր թերթերու առաքումը պիտի կատարուի ինչպէս կը կամիք:

ԻԶՄԻՐ. Տ. Կ. Նաւասարդեան. — Թիւ 21 խնդրոյ լուծումներդ ընդունած ենք:

ԱՄԵՆ ՄԱՐԴ ԿՐՆԱՅ

ՏԱՆ ՄԸ ՏԵՐ ԸԼԼԱԼ

16,000 ՂՐՈՒՇԻ ԱՐԺԵՔՈՎ ՏՈՒՆ ՄԸ

ՇԱԲԱԹԸ 10 ՂՐՈՒՇՈՎ

160,000 ՂՐՈՒՇԻ ԱՐԺԵՔՈՎ ՏՈՒՆ ՄԸ

ՇԱԲԱԹԸ 100 ՂՐՈՒՇՈՎ

Կամ սոյն համեմատութեամբ ինչ արժէքով եւ ինչ ձեւով տուն որ ուղուի պիտի կրնայ ստացուիլ քիչ ժամանակէն Պոլսոյ ամենէն մօտ եւ ամենէն գեղեցիկ մէկ գիւղին մէջ

« Տուն, Գործ եւ Դպրոց

պէտք է

մարդոց բարօրութիւնը ապահովելու համար »

ԾԵՐՈՅ ԽՐԱՏ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Անցեալ տարւոյ Յունուար 31-ին Յակոբ Արշակ Էֆէնտիի կողմանէ հրատարակուած մէկ ծրագիր կամ յայտագիրը, որոյ վրայ հիմնուեցաւ Արեւելեան Տնտեսական Միութիւնն ինչպէս անցեալ շաբթու ծանուցինք, սպառած լինելով, շատերու խնդրանաց համեմատ արժան կը համարինք զայն հրատարակել եղած բարեփոխութիւններն ի վերջոյ նշանակելով:

Սոյն անուամբ ընկերութիւն մը պիտի կազմուի Պոլսոյ մէջ Եւրոպիոյ գործակցական ընկերութեանց (Sociétés Coopératives) դրութեամբ, որ է միութիւն մը անձանց՝ որք կը գործեն իրենց մէջ իրենց հաւաքական չահուն համար, իրենք ըլլալով տէր եւ միանգամայն յաճախորդ ընկերութեան: Այս ընկերութեան նպատակը պիտի ըլլայ՝ նախ իր ընկերները մէկ մէկ բնակարանի կամ այլ ստացուածքի տէր ընել՝ եւ ապա ուրիշ տնտեսագիտական եւ կրթական միջոցներով անոնց վիճակը բարելաւել եւ թշուառութեան առաջն առնուլ ըստ կարելոյն:

Ընկերութիւնը գործի պիտի սկսի Պոլսոյ արուարձաններէն մէկուն քով նոր թաղ մը կամ գիւղ մը հիմնելով, որ պիտի ունենայ եւրոպական նորաձեւ գիւղի մը ամեն կատարելութիւնները՝ ընդարձակ հրապարակ եւ փողոցներ՝ մաքուր յարդարուած եւ գիւղերները լուսավառ, աղբիւրներ, բաղնիք, աղօթատեղի եւ դպրոցներ, արհեստանոց, շուկայ, հասարակաց պարտէզ, զբօսանաց տեղեր եւ այլ ինչ որ ժողովրդեան հանգրտութեանը համար անհրաժեշտ նկատուի պիտի շինուի հետզհետէ, եւ այդ շինութիւններէն գոյացած հասոյթներն ալ դըպրոցներուն եւ արհեստներուն յաւաքագիւմութեանը պիտի գործածուին: Ասոնցմէ ի դատ գիւղին մէջ մեծ մթերանոց մը պիտի հաստատուի, ուր պիտի ծախուին ընտանեաց վերաբերեալ ամեն ինչ. որպէս են՝ նըպարեղէնք, կարասիք, վառելիք փայտ, ածուխ ևն, միշտ աղէկ եւ աժան ըլլալու պայմանաւ՝ եւ այս մթերանոցէս գոյացած չահը՝ առեւտուր ընող ընկերաց պիտի վերաբերի՝ սա կերպով. երբ մէկը երկար ժա-

մանակ հոնկից առեւտուր ընէ՝ միշտ վարկ մը ունենալէ զատ, իր հիւանդութեան, նեղութեան կամ ծերութեան ժամանակ՝ ինք, կամ մեռնելէն ետքը իրեն որդերը պիտի կրնան հոնկից իրենց սովորական պէտքերն ստանալ առանց դրամի՝ Հանգըստ Կեանքի Կա՛կէնաց ապահովութեան դրութեամբ: Այս գիւղին մէջ՝ ընկերութեան միջնորդութեամբ, գեղեցիկ պարտիզաւոր տուններ պիտի շինուին բաժանորդաց համար:

Գիւղին տէղն է Եփոսէ - Գոսէն դուրս՝ դէպի Մաքըր գիւղ երթալու դաշտին վերայ, ուր մասնաւոր պայմանագրութեան մը շնորհիւ, այս ընկերութեան համար ապաւնուած կայ աժան գնով մը երեք միլիոն քառակուսի կանգունի չափ գետին՝ որ ծովեզրէն սկսելով երկաթուղիի գծին վրայէն կը տարածուի դէպի ներս. յիշեալ գետինը՝ որոյ օդն ընտիր է եւ ջուրն առատ, Սիրէճիկէն 25՝ իսկ Գոսմ - քաղաքէն միայն 15 վայրկեանի շափ հեռաւորութիւն՝ եւ երթեւեկութեան ալ զանազան միջոցներ ունենալով, կատարելագոյն յարմար է թէ՛ ամառուան եւ թէ՛ ձմեռուան բնակութեան՝ տմեն աստիճանի անձանց համար: Ընկերութիւնը պիտի ջանայ՝ սոյն նորաձեւ գիւղը ՀԱՄԻՏԻՆ անուամբ արձանագրել տալ եւ հրապարակին մէջ՝ ժողովրդեան սիրոյ եւ երախտագիտութեան մէկ նշանը հաստատել հայրախնամ Այսսեր բարձր անուան նուիրեալ:

Այս շինուելիք գիւղին մէջ տուն մը ունեւ եւ ընկերութեան ընելիք բարիքները կարենալ վայելելու համար, բաւական պիտի ըլլայ ամեն պարկեշտ անձի շաբաթը 10 զրուշ վճարելով Արեւելեան Տնտեսական Ընկերութեան անդամ գրուիլ: Շաբաթը տասը զրուշ վճարող ընկեր մը՝ երկու տարիէն գիւղին մէջ 200 քառակուսի կանգուն հողի տէր պիտի ըլլայ. անկից ետքը ամեն տարի վիճակ ձգուելով՝ վիճակը որոց որ ելլէ, ընկերութիւնը անոնց տունները պիտի շինել տայ՝ շաբաթը տասը զրուշ վճարողին՝ տասն հազար (10,000) զրուշնոց շէնք մը: Այսպէս տարուէ տարի շինուելով՝ տասներկու տարուան մէջ բոլոր ընկերաց տուններն ալ պիտի շինուին լրանան. բայց տունները շինուելէն ետքն ալ՝ շաբաթական տաս զրուշը

պիտի վճարուի մինչեւ որ տասն հազար զրուշ, չէնքին գինը ամբողջապէս վճարուած ըլլայ : Ասկից զատ որին տունը որ շինուելու ըլլայ՝ մէջը նստելու համար վարձք մը պիտի տայ՝ ապահովագրութեան դրամով մէկ տեղ՝ շաբաթը 25 զրուշ, մինչեւ իր պարտուց վճարման օրը : Բայց այս ժողովուրդում վարձքերէն՝ վարչական ծախքերն ելելէն ետքը՝ ինչ որ մնայ, դարձեալ ընկերաց պիտի վերադառնայ՝ կէսը ուղղակի՝ տունները լրացած ատեն, եւ կէսն ալ անուղղակի կերպով՝ ընկերութեան գործոցը մէջ գործածուելէն ետքը :

Տուներու շինութեան գործը՝ հրապարակային մրցումով եւ նուազուրդի դրութեամբ, վկայեալ ճարտարապետաց պիտի յանձնուի՝ եւ շինութեանց վերաբերեալ նիւթերը՝ ինչպէս են քար, կիր, կղմիւնտը, տախտակ, երկաթ եւ, ընկերութիւնը կանխիկ դրամով եւ մեծ քանակութեամբ պիտի կրնայ գնել ուղղակի աղբիւրներէն, ուստի՝ այս պայմաններով ընկերութեան խնամոց եւ հսկողութեան տակ՝ եւ շատը մէկանց շինուած տուններն՝ բնականաբար աժան պիտի ըլլան եւ աղէկ, հետեւաբար ինչ որ ընկերութիւնը տասն հազար զրուշի շինել տայ՝ մասնաւոր անհատներու շինել տուածին համեմատելով, կրնայ ամենայն վստահութեամբ ենթադրուիլ թէ գոնէ 12 հազար զրուշի արժէք մ'ունենայ, եւ երբ վերեւ նկարագրուած նորածեւ գիւղին մէջ շէնցած տեղերուն կանգունին միայն 20 զրուշ գին գնելու ըլլանք՝ 200 կտնգուն գետնին արժէքը կ'ըլլայ 4,000 զր, որ միատեղ հաշուելով կը տեսնենք թէ ընկերի մը ստանալիք տունը առ նուազն 16,000 զրի արժէք մը պիտի կրնայ ունենալ, որու փոխարէն իր վճարելիքն է հողին եւ շէնքին ի միասին 11,000 զր, ան ալ շաբաթ շաբաթ տասնական զրով : Եւ թէ յետոյ՝ ինչպէս վերեւ ըսուեցաւ, վարձքերէն իր ստանալիք դրամներն ալ որ պիտի կրնայ 3-4,000 զրի հասնիլ, յիշեալ գումարէն զեղջելու ըլլանք, այն ատեն կը տեսնենք վերջապէս թէ ընկերութեան անդամ գրուող մէկը պիտի կրնայ՝ ամենափոքր խնայողութեամբ մը, իր ուզած տանը տէր ըլլալ՝ անոր միայն կէս արժէքը վճարելով եւ առանց կրելու այն յոգնութիւններն եւ հազարումէկ զոռարութիւնները՝ որոց սովորաբար ենթակայ կ'ըլլայ տուն շինել տուողն :

(Մնացեալն յաջորդ խոսքով)

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՍՈՒՐ ՀԱՆ ԴԱԿ

6 Յունիս 1886

Յունաց ազգային եւ եկեղեցական գործերը կ'երեւի թէ այնքան գոհացուցիչ վիճակ մը չունին ի գաւառս, իսկ գի Ֆէնէրի Պատրիարքարանի Սինոդն իւր վերջին նստին մէջ լուրջ ուշադրութեան առնելով զայն, բաւական կծու լեզուաւ դիտողագիր մ'ուղղեց Յովակիմ Գ. Պատրիարքին որ իւր ծանուցեալ հիւանդութեան պատճառաւ Հէյպէլի կղզին կը գտնուի եւ հազիւ շաբաթ մի անդամ կ'երթայ անօրինել վարչական կարեւորագոյն գործերը : Սինոդի անդամոց մէկ մասին երկամեայ պաշտօնավարութեան պայմանաժամը լրացած լինելով, նորեր յաջորդած են անոնց, որով Յունաց եկեղեցական այդ գերագոյն ժողովը նոր կազմակերպութիւն մ'ստանալով, տարբեր աջօք սկսած է գիտել գործերն և անմիջական դարմանի պէտք կը տեսնէ : Կեսարիոյ Մէտրապոլիտը կը նախագահէր այն նստին յորում կենսական պէտք տեսնուեցաւ վերջ տալու իրաց կացութեան մը զոր Սինոդն անհանդուրժելի կը նկատէ եւ երկար ու բուռն վիճաբանութենէ մը յետոյ խմբագրուեցաւ հետեւեալ պաշտօնագիրն զոր յունական Պիլանիէն լրագրէն առնելով հրատարակած են մայրաքաղաքիս գրեթէ բոլոր թերթերը :

«Նկատելով որ մեր ազգային եւ եկեղեցական առանձնաշնորհմունք առ երեսս թողուած են գաւառաց ոմանց մէջ եւ թէ Ձեր Սրբազնութիւն, ի բաց առեալ ընթացիկ գործոց վերաբերեալ քանի մը Ռաֆէլներ, խոյս կուտայ անձամբ դիտողութիւններ ուղղել մեր Վեհապետին լուսամիտ նախարարութեան ու եւ ո՛չ իսկ թոյլ կուտայ որ այդպիսի ձեռնարկ մը կատարուի Սինոդին և Ազգային ժողովոյ անդամներէն կազմեալ յանձնաժողովոյ մը ձեռամբ, որպէս առաջարկուեցաւ քանիցս :

«Նկատելով որ Մակեդոնիոյ, Թրակիոյ եւ Արեւելեան - Բուլղարի Մէտրապոլիտը,

չբաւորութեան մատնուած, քանիցս յայտաբարած են թէ հրաժարական պիտի մատուցանեն, եթէ դարման մը չը խորհուրի իրաց այս կացութեան :

«Նկատելով որ Եկեղեցւոյն և Ազգին համար կենսական խնդիրներ առ կախ կը մընան և Ձեր Սրբազնութիւն բնաւ չը խորհիր անոնց վրայ :

«Նկատելով որ այս կացութիւն բոլորովին նոր է եւ անօրինակ մեր պատրիարքական պատմութեան մէջ եւ անմիջական դարմանի կը կարօտի :

«Հետեւաբար Ձեր Սրբազնութիւնը կը հրաւիրուի, ներկայ պաշտօնագիրս ընդունելուն պէս, իւր ծանուցեալ իմաստութեամբ կռել մեր գործոց այս վիճակն և ըստ կարելոյն փութով իւր նախագահութեան ներքեւ ի նիստ հրաւիրել Ս. Սինոդն և Ազգային Ժողովը, որպէս զի միահաղոյն վիճաբանին անոր վրայ » :

Այս պաշտօնագիր Սինոդի անդամոց կողմէ ստորագրուելէ յետոյ անմիջապէս հաղորդուեցաւ Ս. Պատրիարքին որ իւր նախագահութեան ներքեւ ի նիստ կը գումարէ այսօր Սինոդն եւ Ազգ. Ժողովը :

Շարժումս մէջ վեհ. Սուրբանը մասնաւոր համակրանաց ցոյց մ'ըրաւ առ Մեծ-Եպարքոսն, իմթիաղի պատուանշանը շնորհելով նմա իւր իսկ ձեռք եւ քանի մը պատուարեր խօսքեր արտասանելով այս առթիւ. երկու օր վերջն եւս ոսկի պատեանով թանկագին թուր մը նուէր զրկեց Ն. Բարձրութեան : Վեհ. Սուրբանն այս կերպով իւր բարձր գոհունակութիւնը կ'արտայայտէ այն իմաստուն քաղաքականութեան համար որուն հետեւեցաւ Քեամիլ փաշայի նախարարութիւնը, վերջին ամսոց մէջ կայս. կառավարութիւնն զբաղեցնող քաղաքական ծանր խնդրոց միջոցին :

Այդ նախարարութիւն իւր պատուական անդամներէ մին կորսնցուց անցեալ շարժում յանձին Դատական նախարար Մէրվէր փաշայի որ մեռաւ ի ծեր հասակի : Մէրվէր փաշա պետական վաղեմի պաշտօնատար մ'էր, զանազան կարեւոր պաշտօններու գլուխ գտնուած, ի մէջ այլոց Արտաքին գործոց նախարար եւ Փարիզի Օսմ. դեսպան եղած էր : Մէրվէր փաշայի յա-

ջորդեց Վսեմ. Ճէվաթ փաշա որ քանիցս վարած է արդէն դատական նախարարի պաշտօնն : Այժմէն կը ծանուցուի թէ նորընտիր նախարարը մտադիր է կարեւոր բարեօրոշմներ ներմուծել Ատրիէի գործոց մէջ :

* * *

Քաղաքական կարեւոր լուր մը չ'ունեցանք շարժումս մէջ : Պ. Կլատտոնի իւլանտական ինքնօրինութեան ծրագրոյն մերժումն ծանուցեալ իրողութիւն մ'է արդէն եւ Ֆրանսայի իշխանաց արտաքսման օրինական ծրագիրն ընդունեցաւ Երեսփ. Ժողովէն : Այժմ, խնդիրը կը քննուի Ֆերալոյտին առջեւ :

Սոֆիայի Ազգ. Ժողովոյն որոշմանց մասին տեղեկութիւնք կը պակսին դեռ : Հետագիրք կը ծանուցանեն միայն թէ յոյժ հանդիսաւոր կերպիւ բացուեր է նստաշրջանն եւ բուն ծափահարութեամբք ընդունուեր է իշխանի ներկայութիւնը : Բացման ճառը զոր արտասաներ է Պուլկարիոյ երիտասարդ իշխանը, գոհութիւն կը յայտնէ թէ Պուլկարիոյ մայրաքաղաքին մէջ կ'ողջունէ յանկոյս եւ յայսկոյս Պալքանոց Պուլկար աղգին ներկայացուցչաց առաջին Ազգային Ժողովը, շնորհակալութիւն կը յայտնէ ազգին եւ բանակին որոյ զիւցադնութեամբ եւ զոհողութեամբք փառաւոր յաղթանակ մը ձեռք բերաւ աղդն եւ որ պատուաւոր զիրք մը տուաւ Պուլկարիոյ՝ Պալքանեան պետութեանց կարգին մէջ : Այս բանախօսութեան ի պատասխան բըւէտրկելի ուղերձէն պիտի յայտնուի Սոֆիայէն հետեւելիք ուղղութիւնն :

* * *

Ազգային լրոց շարքին մէջ յիշատակութեան արժանի գլխաւոր լուրն է 500 ոսկ. լոյ գումարի նուէր մը զոր բարերար ազգային մը, որոյ անունը չը յայտնուիր առայժմ, տուած է ի նպաստ շինութեան Սամաթիոյ եկեղեցւոյն : Ս. Պատրիարք Հայրն անձամբ յանձնելով այդ գումարը շինութեան Մասնաժողովին, յորդորեց եւ խրախուսեց շարունակել շինութեան գործն :

Երեսփ. Ժողովը նիստ չ'ըրաւ այս շարժումս վաղն, առաջին անգամ կը գու-

մարի կաթողիկոսական նորակազմ ֆանձնա-
թողովն ընդ նախագահութեամբ Ս. Պատ-
րիարքի : Այն պահուն երբ վեհ. Մակար
կաթողիկոս մոտադրութիւն կը յայտնէ եկե-
ղեցական համագումար ժողով հրաւիրելու
ի Ս. Էջմիածին, բնականաբար սովորակա-
նէն աւելի կարեւորութիւն մը կ'ստանայ վե-
րոյիչեալ ֆանձնաթողովոյ աշխատութիւնն :

Տ. Ս.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅՈՒՑԱՅԱՆԴԵՍ

ԲԱՐԻՁ 1886

Ի ՊԱԼԱՏՆ ՃԱՐՏԱՐԱՐՈՒՆԵՍԻՅ

(ՇԱՆ-Ձ-ԷԼԻՉԷ)

ՅՈՒԼԻՍԷՆ ՆՈՅՆՄԵՆԵՐ

Ճարտարական գիտութեանց և արհես-
տից Ընկերութիւնը կազմակերպած է զայս
Յուցահանդէս ընդ հովանաւորութեամբ Ֆը-
րանսայի վաճառականութեան և Ճարտար-
արուեստից նախարարին և Մերակուտի ան-
դամոց, Երեսօխոսանաց և Բարիքի Գաղա-
քապետական Խորհրդականաց խմբի մը :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՅՏԱԳԻՐ

Ամեն տեսակ եւ աֆէ երբէ արտադ-
րութիւնք կ'ընդունուին ի Յուցահանդէսն.

1. ԽՈՒՄԲ.—ԴԱՍ 1՝ Նախնական կրթու-
թիւն.—ԴԱՍ 2՝ Երկրորդական և բարձ-
րագոյն կրթութիւն :
2. ԽՈՒՄԲ.—Արհեստք և Գեղարվեստք.—
ԴԱՍ 3՝ կրթութիւն արուեստից.—ԴԱՍ
4՝ կրթութիւն Գիտութեանց :
3. ԽՈՒՄԲ.—ԴԱՍ 5՝ Արհեստագիտական
կրթութիւն.—ԴԱՍ 6՝ Արհեստագիտա-
կան վարժարանաց աշակերտաց աշխա-
տութիւնք :
4. ԽՈՒՄԲ.—ԴԱՍ 7՝ Մարմնամարզ.—ԴԱՍ
8՝ Զինաստութիւն :
5. ԽՈՒՄԲ.—ԴԱՍ 9՝ Թղթագործութիւն,
Գրատուն, Տպարան.—ԴԱՍ 10՝ Լուսա-
նկարչութիւն :
6. ԽՈՒՄԲ.—ԴԱՍ 11՝ Երաժշտական գոր-
ծիք.—ԴԱՍ 12՝ Նուագախումբ :

7. ԽՈՒՄԲ.—ԴԱՍ 13՝ Զինուորական ար-
ուեստք.—ԴԱՍ 14՝ Որսորդութիւն, Զըկ-
նորսութիւն :
8. ԽՈՒՄԲ. Մեքսիկական արհեստք. ԴԱՍ
15՝ Նախնական և գործուած Մետաղք,
Երկաթք, Թափծուք, պողպատք, կա-
պար, արծաթ, զինկ, նիքէլ, երկաթ-
թիթեղ, թիթեղ.—ԴԱՍ 16՝ Պղինձ.—
ԴԱՍ 17՝ Ոսկերչական գործեր, Դանակք :
9. ԽՈՒՄԲ. Մեքսիկական արհեստք. ԴԱՍ
18՝ Ընդհանուր Մեքսիկական գիտութիւն.—
ԴԱՍ 19՝ Ճնշման Մեքսիկական գիտութիւն,
Ժամացոյցք, կշռորդք.—ԴԱՍ 20՝ Զե-
ռուցումն, Լուսաւորութիւն, Օդածը-
գութիւն, զանազան մեքենայք, չոգե-
չարժ մեքենայք, կազով մեքենայք, օդով
մեքենայք, ջրաբաշխական մեքենայք,
ջրհանք, բեռնաբարձ մեքենայ, բեռ-
նաբարձ գլան, կշռող գործիք, ջաղացք,
մամուլք, գործիք :
10. ԽՈՒՄԲ.—ԴԱՍ 21՝ Երկարականութիւն.
—ԴԱՍ 22՝ Հեռագրութիւն, Զայնախո-
տութիւն :
11. ԽՈՒՄԲ.—Քիմիական արհեստք. ԴԱՍ 23՝
Նիւթ և Հնարք.—ԴԱՍ 14՝ Խաղախոր-
դութիւն :
12. ԽՈՒՄԲ.—ԴԱՍ 25՝ Հանրային աշխա-
տութիւնք, Շէնք.—ԴԱՍ 26՝ Ճարտա-
րագետութիւն, Երկրաչափութիւն :
13. ԽՈՒՄԲ.—Կահ Կարասիք և յարակից, Խե-
ցեքործութիւն, Բեքեքործութիւն, Ար-
հեստք Օրհնարարի և Զարդարիչի.—ԴԱՍ
27՝ Կահ կարասիք.—ԴԱՍ 28՝ Գորգ
և Ներկարարութիւն.—ԴԱՍ 29՝ Յալս-
ճապակի, Բիւրեղ եւ ապակի :
14. ԽՈՒՄԲ.—ԴԱՍ 30՝ Թիւլ եւ մանած.—
ԴԱՍ 31՝ Հագուստք երկու սեռից :
15. ԽՈՒՄԲ.—Արհեստք Պեքմանք. ԴԱՍ 32՝
Գոհարեղէնք.—ԴԱՍ 33՝ Մարոկենի,
Տապեղարարութիւն (մարանկօղլուք),
Հողմահարք :
16. ԽՈՒՄԲ.—Ուրհեստք. ԴԱՍ 34՝ Ընդեղէնք,
ալիւրեղէնք.—ԴԱՍ 35՝ Կարագ, պը-
տուղ, բանջարեղէն.—ԴԱՍ 36՝ Միս,
ձուկ եւ պահածոյ ուտելիք.—ԴԱՍ 37՝
Համեմանք, անուշեղէնք.—ԴԱՍ 38՝ Ո-
գելից ըմպելիք, Գինի, Գարեջուր եւ :
17. ԽՈՒՄԲ.—Արհեստք Կարասիք, Բեքեքոր-
ծութիւն և Քիմիական արհեստք.—ԴԱՍ 39՝ Ա-

ռողջաբանութիւնն.— ԴԱՍ 40՝ Դեղա-
գործութիւն, Հոտաւէտ նիւթեր :

18. ԽՈՒՄԲ.— Մարդապարտութիւն, Ուղե-
բարձր, Խոշորութիւն, Բանակ.— ԴԱՍ
41՝ Մարդապարտութիւն.— ԴԱՍ 42՝ Ու-
ղեւորութիւնը, Բանակ :

19. ԽՈՒՄԲ.— ԴԱՍ 43՝ Ուղեւորաց փոխա-
դրութիւնը.— ԴԱՍ 44՝ Կառք.— ԴԱՍ
45՝ Զօով տեղափոխութիւն.— ԴԱՍ 46՝
Օղային տեղափոխութիւն :

20. ԽՈՒՄԲ.— ԴԱՍ 47՝ Հաւաքածոյք, Հնու-
թեանց ցուցահանդէս.— ԴԱՍ 48՝ Վե-
րոյիչեալ խումբերու մէջ չգտնուող
զանազան առարկայք. գործաւորաց կամ
գործաւորական ընկերակցութեանց շի-
նած առարկայներ :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ

Յուցահանդիսաց ունեցած գործնական
օգտակարութիւնն անժխտելի է : Հոչակ-
ման եւ ծաւալման գերընտիր միջոցն են :

Բարիւղի անկէք, աշխարհիս միակ քա-
ղաքին որ իրապէս աշխարհաքաղաքացի է,
միջազային եւ տիեզերական ընել այդ
ճարտարական եւ գեղարուեստական ցոյ-
ցերը : 1855 տարին հաստատեց այդ գրու-
թիւնն, յետոյ եկաւ 1867, 1878, մինչդեռ
նոյն միջոցին մեծ տէրութիւնը առաւել
կամ նուազ յաջողութեամբ կը հետեւէին
տրուած օրինակին եւ միման :

Այսօր միջազային ցուցահանդէսը ան-
հրաժեշտ դարձած են. ճարտարարուեստից
և վաճառականութեան մէջ կը գրաւեն կա-
րեւոր տեղ մը զոր լիովին կ'արդարացնեն
տրուած արդիւնքներ :

Այժմ, հեռաւորութիւնը ո՛չ եւս ի նը-
կատ կ'առնուին, Հում, Միլան, Նաբոլի,
Թուրին, Ֆիորէնցա, Ճէնովա, Պոլլենը,
Գահիրէ, Ալէքսանդրիա շոգոյ միջոցաւ
բոլորովին մօտ են Բարիլի : Կարեւոր և փո-
խադարձ վաճառականութիւն մը հաստա-
տուած է ընդմէջ Ֆրանսայի, Իտալիոյ եւ
Եգիպտոսի, եւ այդ երկրաց իւրաքանչիւ-
րին յատուկ արտադրութեանց յարատեւ
փոխանակութիւն մը տեղի կ'ունենայ : Սա
է իրաց վիճակն զոր կարեւոր է զարգացնել
եւ ընդհանրացնել :

Ճարտարարուեստից պալատն, ի Շան-
շիլդէ, որ 1885 ին օրրանն եղաւ միջազ-

գային ցուցահանդիսաց, պիտի ծառայէ
1886 ի ցուցահանդէսին :

Բոլոր օտար ճարտարարուեստը հրաւիր-
ուած են այս մրցման, որ, անտարակոյս,
բարորութիւն եւ կենաց զօրաւոր տարր մը
պիտի լինի միջազային վաճառականութեան
համար :

Վարչութիւնն արդէն ամեն ջանք ի գործ
դրած է որ ցուցահանդէսը շահաւէտ լինի
մասնակից օտար տուներուն համար : Այս-
պէս, վաճառումը թոյլ տրուած է, ինչպէս և
տեղւոյն վրայ համոտեւութիւնն, մասնաւոր
պայմաններով, ևն :

Միւս կողմէ, գոհացում տալու համար
ամեն շահուց, վարչութիւնը կարելի եղա-
ծին չափ մեծ տեղ պիտի տայ օտար տար-
ւին՝ վարձատրութեանց դատաւորաց կաղ-
մութեան մէջ :

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱԳԻՐ

1. Անուն, Մականուն, ընկերութեան ա-
նուն .
2. Հասցէ և բնակարան .
3. Ապրանաց տեսակը .
4. Այդ ապրանքները կրնա՞ն ծախուիլ եւ
ի՞նչ պայմաններով .
5. Ո՞ր կ'ուզուի դնել ապրանքները .
6. Յոյց տալ հարկ եղած ջրի, կաղի, շար-
ժող զօրութեան քանակութիւնները .
7. Ներկայացեալ ապրանաց առանձին ար-
ժանիքը .
8. Նախորդ Յուցահանդիսին մէջ ստաց-
ուած վարձատրութիւնները .
9. ԴԵՏՈՂՈՒԹԻՒՆՔ .
10. Յուցահանդէսէն յետոյ ո՞ր պէտք է
զրկել ապրանքները .

Ստորագրեալն յանձն կ'առնու համակեր-
պիլ Յուցահանդէսին կանոնադրոց տրամա-
դրութեանց, ինչպէս նաեւ Վարչութեան
և դատաւորաց զանազան պատուէրներուն
թիւնն .

Մարդապարտութիւն .

Մասնակցութեան խնդրագրերն ուղղել
առ Պ. Է. Պ. Կրիշնէր, ընդհանուր Գովի-
սէր օտար ճիւղերուն, ՅՅ, Շօսէ-տ'Անթէն
փողոց, ԲԱՐԻԶ :

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻՒՋԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԷ ԻՐԱԳՈՅ